ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան 2024

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուղեցույցի նպատակն է օգնել սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստացիային մասնակցելու ցանկություն ունեցող ուսուցիչներին (զինղեկներին) թեստավորմանը նախապատրաստվելուն:

Ուղեցույցը նաև ուղենիշ է ատեստավորման թեստը կազմողների համար:

Թեստի առաջադրանքների համար հիմք են հանդիսացել ՀՀ հիմնական և ավագ դպրոցների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրերը և դասագրքերը, ինչպես նաև սույն ուղեցույցի «Գրականություն» բաժնում նշված մասնագիտական գրականությունը:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատեստացիայի համար կազմված թեստը ներառում է 50 առաջադրանք: Թեստը ստուգվում է ատեստավորման արդյունքում ուսուցիչների (զինղեկների) համար համապատասխան որոշում կայացնելու նպատակով:

Առաջադրանքները թեստում բաշխվում են ըստ ներկայացման ձևի և դրանց համապատասխան միավորների (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Առաջադրանքի ներկայացման ձևը	*Առաջադրանքների քանակը*	*Ընդհանուր միավորը*
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ (№1-36)	36	36
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ-խնդիրներ (№37-47)	11	22
Կարճ պատասխանով առաջադրանքներ (№48-50)	3	12
ԸՆԴԱՄԵՆԸ	50	70

Ընտրովի պատասխանով առաջադրանքները (№1-36) կազմված են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դպրոցական դասագրքերի բոլոր բաժինների առաջադրանքներից [1-13]:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ-խնդիրները (№37-47) կազմված են «Կրակային պատրաստություն», «Ռազմական տեղագրություն» և «Անվտանգ կենսագործունեություն» բաժինների առաջադրանքներից:

Կարճ պատասխանով առաջադրանքները (№48-50) կազմված են «Կրակային պատրաստություն», «Էջեր հայ ռազմարվեստի պատմությունից» և «Առաջին բուժօգնության հիմունքներ» բաժինների առաջադրանքներից:

Ընտրովի պատասխանով առաջադրանքը (№1-36) համարվում է կատարված, եթե առաջարկվող չորս տարբերակներից ընտրված է ճիշտ պատասխանը, և տրվում է 1(մեկ) միավոր:

Ընտրովի պատասխանով առաջադրանք-խնդիրը (№37-47) համարվում է կատարված, եթե առաջարկվող չորս տարբերակներից ընտրված է ճիշտ պատասխանը, և տրվում է 2(երկու) միավոր:

Կարճ պատասխանով առաջադրանքը (№48-50) համարվում է լրիվ կատարված, եթե բոլոր չորս պատասխանները ճիշտ են, և տրվում է 4(չորս) միավոր, երեք ճիշտ պատասխանի դեպքում՝ 3(երեք) միավոր, երկու ճիշտ պատասխանի դեպքում՝ 2(երկու) միավոր, մեկ ճիշտ պատասխանի դեպքում՝ 1(մեկ) միավոր, ոչ մի ճիշտ պատասխանի դեպքում՝ 0(զրո) միավոր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ատեստավորման թեստը ներառում է առաջադրանքներ ՀՀ հիմնական և ավագ դպրոցների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրային բոլոր բաժիններից՝ «Էջեր հայ ռազմարվեստի պատմությունից», «Մարտավարության հիմունքներ», «Կրակային պատրաստություն», «ՀՀ ԶՈՒ կանոնագրքեր», «Շարային պատրաստություն», «Ռազմական տեղագրություն», «Միջազգային մարդասիրական իրավունք», «Անվտանգ կենսագործունեություն», «Առաջին բուժօգնության հիմունքներ»:

Թեստերի լրացման համար հատկացվում է 180 րոպե: Թույլատրվում է օգտագործելու պարզագույն գործողություններ կատարող հաշվիչ:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներին (№1-36) պատասխանելու համար, ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է **նշել** տվյալ պատասխանը և սեղմել **պահպանել** կոճակը:

Նմուշ՝

Ո՞րն է մարտի սահմանումը.

1. Պատերազմող կողմերի ստորաբաժանումների, զորամասերի ստորաբաժանումների զինված ընդհարումն է:
2. Պատերազմող կողմերի լայնամասշտաբ գործողություններն են՝ դիրքային առավելություններ ստանալու և հետագայում տարածքներ զավթելու նպատակով:
3. Մարտական գործողությունների միջոցով հակամարտող կողմերի շահավետ և արդյունավետ դիրքերի զբաղեցումն է:
4. Պատերազմող կողմի հակառակորդի ստորաբաժանումների մարտունակության չեզոքացումն ու ոչնչացումն է:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ-խնդիրներին (№37-47) պատասխանելու համար պետք է լուծել խնդիրը, հետո անհրաժեշտ է **նշել** տվյալ պատասխանը և սեղմել **պահպանել** կոճակը:

Նմուշ՝

Նշանակետը գտնվում է թաքստոցից 50մ հեռավորության վրա, այդ թաքստոցի բարձրությունը 25 մ է: Որոշել նշանառման անկյունային մեծությունը:

1. 5-00
2. 4-00
3. 3-20
4. 2-00

Կարճ պատասխանով առաջադրանքներին (№48-50) պատասխանելիս անհրաժեշտ է տառային նշանով ամրագրված համապատասխան վանդակի վրա սեղմելուց հետո ընտրել պատասխանը: Բոլոր պատասխանները նշելուց հետո պետք է սեղմել **պահպանել** կոճակը:

Նմուշ՝

Համապատասխանեցնել մարտական տեխնիկան՝ ըստ պայմանական նշանների՝

ա) 1. Զրահափոխադրիչ

բ) 2. Տանկ

գ) 3. Ավտոմեքենա

դ) 4. Հետևակի մարտական մեքենա

Թեստի բոլոր պատասխանները նշելուց և պահպանելուց հետո, աշխատանքը ավարտելուց առաջ պետք է սեղմել **Հաստատել** կոճակը:

Գրականություն

1. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք, մաս 1 /Ընդհ. խմբ.՝ Ս.Մարգարյան, Երևան, Աստղիկ Գրատուն, 2019, 80 էջ:
2. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք, մաս 2 /Ընդհ. խմբ.՝ Ս.Մարգարյան, Երևան, Աստղիկ Գրատուն, 2019, 56 էջ:
3. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագիրք /Ընդհ. խմբ.՝ Ս.Մարգարյան, Երևան, Աստղիկ Գրատուն, 2020, 120 էջ:
4. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք /Ընդհ. խմբ.՝ Ս.Մարգարյան, Երևան, Աստղիկ Գրատուն, 2017, 112 էջ:
5. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք /Ընդհ. խմբ.՝ Ս.Մարգարյան, Երևան, Աստղիկ Գրատուն, 2017, 112 էջ:
6. Սարկիսյան Ռ.Ն., Միջազգային մարդասիրական իրավունք, Երևան, Հույս և Սեր հրատ., 2002, 144 էջ:
7. Ռազմական տեղագրություն /Գ.Ա.Մանուկյանի հսկողությամբ/, Երևան, ՍԻՄ տպագրատուն, 2008, 128 էջ:
8. Մոտոհրաձգային զորքերի սերժանտի դասագիրք /գեներալ-մայոր Մ.Աբրահամյանի և գեներալ-մայոր Մ.Սարգսյանի հսկողությամբ/, Երևան, ՀՀ ՊՆ հրատարակչություն, 1996, 342 էջ:
9. ՀՀ ԶՈՒ կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագիրք, Երևան, 2017, 168 էջ:
10. ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագիրք, Երևան, 2017, 272 էջ:
11. ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագիրք, Երևան, 2012, 50 էջ:
12. ՀՀ ԶՈՒ շարային կանոնադրություն, Երևան, 2001, 128 էջ:
13. Մարտական կանոնադրություն, մաս III, Երևան, 2006, 244 էջ: